

Արձանագրություն թիվ 3

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ

30 հոկտեմբերի 2018թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի բոլոր 15 անդամները:

Օրակարգ

1. Դասավանդման պրոցեսում տեղատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման և նորագույն մեթոդների կիրառման քննարկում :
2. 2018-2019 ուս.տարվա ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՏԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում դասավանդող մի խումբ դասախոսներ դասապրոցեսն անց են կացնում տեխնիկական միջոցների զուգակցմամբ և հաճախ օգտվում էին բնագիտական ֆակուլտետի համակարգչային սրահներից, 5-րդ և 6-րդ լսարաններից, որը կահավորվել է հատկապես կիրառական արվեստի ֆակուլտետի դասապրոցեսները կազմակերպելու համար, սակայն 2016թ.սեպտեմբերի մեկից ֆակուլտետի կազմում գործում է համակարգչային սրահ՝ անհրաժեշտ գույքով և

տեխնիկական միջոցներով: Բանախոսը նշեց, որ «Արվեստի պատմություն», «Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ», «Էկոլոգիայի բնապահպանության հիմունքներ», «Կոմպոզիցիա», «Դիզայն նախագծում», «Համակարգչային գրաֆիկա» և նմանատիպ այլ դասընթացների ժամանակ հաճախակի օգտվում են ընձեռնված հնարավորությունից և խորհուրդ տվեց մնացած դասընթացների իրականացման ժամանակ նույնպես օգտագործել դասավանդման ժամանակակից մեթոդներից և օգտվել համակարգչային սրահներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – „Գծանկարի, գունանկարի և քանդակի” ամբիոնի ասիստենտ Ս.Թ.Հովհաննիսյանը: Նա կարևորեց դասավանդման օժանդակ և դիդակտիկ պարագաների դերն ու նշանակությունը և փաստեց, որ վերջիններս օգնում են դասավանդողին ավելի „հարուստ” դարձնել դասապրոցեսը, իսկ ուսանողներին՝ ավելի դյուրին և ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաների դասախոսներին հանձնարարել հավաքել համապատասխան էլեկտրոնային նյութեր, կազմել ներկայացումներ(պրեզենտացիաներ) և կիրառել դասապրոցեսների ընթացքում:

Օրակարգի երկրորդ հարցի մասին տեղեկատվություն տրամադրեց „Կիրառական արվեստ” և „Դիզայն” մասնագիտությունների պատասխանատու, ասիստենտ Լ.Ֆլջյանը: Նա նշեց, որ հարցը բավականին երկար ժամանակ քննարկման փուլում է և ավարտական աշխատանքների ղեկավարները ուսանողների հետ եկել են ընդհանուր որոշման և ներկայացրել իրենց թեմաների նախնական վերնագրերը:

ՈՐՈՇԵՑԻՆ 1.Նախնական հաստատել թեմաները՝ 2019թ. փետրվարին անդրադառնալու և վերջնական որոշում կայացնելու պայմանով:

Ընթացիկ հարցերից կարևորվեցին աշխատակիցների և ուսանողների կարգապահությանը վերաբերող հարցեր, տրվեցին զգուշացումներ և ձեռք բերվեցին պայմանավորնաձություններ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ք.Հ.Մխիթարյան